ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2019 թվականի N-85-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀայաստանիՀանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումները,

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին նվիրված մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) դրամ, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին նվիրված մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, աշխատակարգը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5-րդ հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

9/19/2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 2005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ սեպտեմբերի 16

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ սեպտեմբեր 16 -ի
N8ՀԱ որոշման

ԿԱԶՄ
Հայաստանի Հանրապետության անկախության տոնին նվիրված միջոցառումների կազմակերպական կոմիտեի

1. Ն.Բաբայան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
2. Գ.Թադևոսյան	ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական
3. Ն.Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
4. Մ.Գանդալյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
5. Ս.Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
6. Ա.Սիմոնյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար
7. Վ. Արզումանյան	«Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

18.09.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ.Թադևոսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ.սեպտեմբերի 16-ի
N 35 Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
Հայաստանի Հանրապետության անկախության տոնին նվիրված միջոցառումների անցկացման

Միջոցառման նպատակն է՝ մարզի բնակչության շրջանում ներկայացնել մեր անկախ պետականության կայացած լինելը, ազգային արժեքների գնահատումը, հայրենասիրական գաղափարների տարածումը, միասնական հայրենիք կերտելու գաղափարների ամրապնդումը, հայրենիքի նկատմամբ հավատի դրսևորումը, երիտասարդների շրջանում ռազմահայրենասիրական ոգու բարձրացումն ու սերմանումը:

Միջոցառմանը մասնակցում են մարզի համայնքներից ժամանած երաժշտական խմբեր, անհատ կատարողներ, հանրակրթական դպրոցների աշակերտներ:

Մարզկենտրոն Կապան քաղաքում կկազմակերպվի «Հայրենի բնաշխարհի չխամրող գույները» խորագրով նկարչական աշխատանքների ցուցահանդես:

Կներկայացվի Անկախության տոնին նվիրված ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհավորական ուղերձը հայկական բանակում ծառայողներին և կկազմակերպվի տոնական համերգ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասերում:

Հարգանքի տուրք և ծաղկադրում Արցախյան և քառօրյա պատերազմի նահատակների շիրիմներին և պատերազմում անհայտ կորածների հուշակոթողին:

Հրավառություն:

18.09.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Հ. Թադևոսյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ.սեպտեմբերի 16-ի
N 35-Ա որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

Հայաստանի Հանրապետության անկախության տոնին նվիրված միջոցառման

Միջոցառման նպատակը

Միջոցառման նպատակն է մարզի բնակչության շրջանում ներկայացնել մեր անկախ պետականության կայացած լինելը, ազգային արժեքների գնահատումը, հայրենասիրական գաղափարների տարածումը, երիտասարդության ու մատաղ սերնդի մեջ մշակութային արժեքների գնահատումը, միասնական հայրենիք կերտելու գաղափարների ամրապնդումը, գեղագիտական դաստիարակության խնդիրների իրականացումը, հայրենիքի նկատմամբ հավատի դրսևորումը:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը

Անկախության տոնին նվիրված միջոցառման պատվիրատուն է՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ ՀՀ Սյունիքի մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ մարզի համայնքների մասնակցությամբ:

Միջոցառման մասնակիցները

Անկախության տոնին նվիրված միջոցառմանը մասնակցում են մարզի համայնքներից ժամանած երաժշտական խմբեր, անհատ կատարողներ, հանրակրթական դպրոցների աշակերտներ:

Միջոցառման ժամկետը և վայրը

Միջոցառումներն անց են կացվելու ս/թ սեպտեմբեր ամսում՝ մարզի համայնքներում և մարզում տեղակայված N զորամասում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

Անկախության տոնին նվիրված միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը, միջոցառումների անցկացման վայրը և ժամանակը: Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ: Միջոցառումների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է պատվիրատուի կողմից կատարող կազմակերպությունը:

18.09.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ.Թադևոսյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ սեպտեմբեր 16 -ի
N&ՀԱ որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ
Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին նվիրված միջոցառումների

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216	60,0
2	Սարքեր և սարքավորումների վարձակալում	4216	40.0
3	Հանրային սննդի ծառայություն	4236	25.0
4	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /իրավառություն/	4239	600.0
5	Մասնագիտական ծառայություններ	4241	155.0
6	Ծաղիկներ	4261	20,0
	Ընդամենը		900.0

18.09.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ.Թադևոսյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ սեպտեմբերի 16-ի
N 85-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին նվիրված միջոցառումների

h/h	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1	«Հայրենի բնաշխարհի չխամրող գույները» խորագրով նկարչական աշխատանքների ցուցահանդես՝ նվիրված ՀՀ անկախության 28-ամյակին	18-ից-22-ը սեպտեմբերի 2019թ	Կապան համայնք
2	Անկախության տոնին նվիրված ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհավորական ուղերձը հայկական բանակում ծառայողներին, և Տոնական համերգ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասերում	20-ին սեպտեմբերի 2019թ.ժամը 12^{00}	ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամաս
3	Հարգանքի տուրք և ծաղկադրում Արցախյան և քառօրյա պատերազմի նահատակների շիրիմներին և պատերազմում անհայտ կորածների հուշակոթողին	21-ին սեպտեմբերի 2019թ ժամը 11^{30}	Կապան համայնք Բաղաբուրջ հուշահամալիր
4	Հրավառություն	21-ին սեպտեմբերի 2019թ ժամը 21.00	Սյունիքի մարզ Տեղ համայնք

18.09.2019

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ

TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ Գ. Թադևոսյան